

գէն, Նախիջևեանէն, Զուղայէն, նաեւ հիւսիսային Պարսկաստանէն :

Ինչպէս ըսի, բազմաթիւ են վաւերաթուղթեր Հայ-Վենետ մետաքսի վաճառականութեանց : Սակայն, իմ միակ աղբիւրս է Հ. Ղ. Ալիշանի Հայ-Վենետը, որ այդ կարեւոր նիւթերուն մասին հատուկօր տեղեկութեանց պատասխաններ միայն կուտայ :

Օրինակ, 1536ին «Նիկիոլոս Դուլչէ (Dolce) անուն մէկն՝ Վենետիկէն լաթեղէնի վաճառքով է Տրիպոլիս (վերը յիշուած Հալէպի նաւահանդիստը գնացեր է. եւ այն տեղի Պօճայ Ղազէլ (Gazel, թուի Ղազար) Հայոց հետ առուտուր ըրեր է, որ երկար՝ աւելի քան 15 տարիներու խնդրոց, դատի եւ իրեն բանտուելու ատիթ եղեր է : Հայէն մետաքս առեր, փոխանակ տուեր է չուխայ եւ անոր նման նիւթ մը՝ որ Carisce կամ Carisca (Անգլիացոց karsie կամ kersey-ն է՝ Յ. Ք.) գրուած է. բայց դեռ պարտական մնայ 1500 կանգուն այլ տալու առջինէն, 300 կտոր երկրորդէն : Այն ատեն հանդիպի պատերազմն Օսմանեանց, որք կողոպտեն ասոր վաճառքն՝ յԱղեքսանդրիա, իրբ 6000 դուկատ գնով. իսկ ինքն յետ հաշտութեանն, մետաքսն առած կուղայ ի Վենետիկ, կու բանայ սնտուկները, եւ մետաքսը իր կարծածէն աւելի ցած տեսակ կու գտնէ. անոր համար Չուխայն կու խաւրէ, բայց մէկալէն՝ փոխանակ 300 կտորի՝ 160 միայն կու խաւրէ. մնացեալ 140-ը բռնելով իրբ փոխարէն անարդ մետաքսին : Ղազէլ կու ահաճի, եւ եթէ առաջ 500 դուկատ համարէր առնելիքը, հիմայ կու պահանջէ 3361, ծեղգի(63) ոսկուով, դիմելով ի Կ. Պոլիս առ Ռիւսոյէմ փաշայ՝ խնամի սուլթանին, եւ թէպէտ պայլն եւ գեսպանն Վենետաց՝ կու ջանան պաշտպանել իրենց հայրենակիցը, բայց փաշայն կու սպանայ՝ որ մինչեւ չհատուցանեն՝ չերեւանն՝ ոչ իրեն եւ ոչ ուրիշ մեծամեծաց : 4)

3) Որ թրքական zeccheen մըն է մօտաւորապէս 9 անգլիական շիլինկ կամ 2.07 ամերիկեան տոլար :

4) Հայ-Վենետ, 1896, Ս. Ղազար, էջ 431-432 :

Այս խնդիրը տարիներով կը շարունակուի :

«1541, սեպտեմբեր 1, Ե. Գիտունքն (Վենետիկի)՝ ըստ խնդրոյ Թուրքաց, Պարսից եւ Ասորոց (որք մեծ մասամբ Հայք էին), հաւանեցան որ 2 1/2 տուրքէ մետաքսից ազատ ըլլան», 1) 1568 Թրքահիմա կամ Արրահամայ որդի Յակովբ Մերտինցին երկու հակ մետաքս կը պահանջէ Avetula անուն Իտալացիէն : (2) Դարձեալ 1569-ին «Յակովբ՝ Gentile? կոչուած եւ Սիմոնի Ո. Յարութիւն, որ Թուրքաց եւ Պարսից հետ Պարսկաստանէն մետաքս բերեր էին ի Կէլիպոլու, եւ անկից ցամաքով եկան ի Վենետիկ, մինչ այլազգիք նաւով դալով՝ մաքսէ ազատ եղան, խնդրեն որ իրենց այլ չնորհուի ազատութիւն, վասնզի ի Կ. Պոլսէն չեն եկած. (ըսել է թէ այդ քաղաքէն բերողք՝ պարտաւոր էին մաքսի եւ բաժի) : Նոյն տարին (1569) ասոնցմէ առաջ ուրիշ Անկիւրացի մը՝ որուն անունն եւ հօրն այլ խանդարած են նօտարք, գրելով Սերին եւ Գարան? (Serinus Ermenius filius S. Carani), նոյնպէս մետաքս բերեր են, կու յանձնէ (ապրիլ 28) Նիկիոլ Արիկոնի Իտալացոց, որ պահանջէ յՈկտաւիոյ Պարոնայ՝ իրենցմէ գնած մետաքսին դինը. — — — Նշանելի է մի եւ նոյն ժամանակ (կ'աւելցնէ Հ. Ալիշան) գրեթէ մի եւ նոյն տարի՝ Անկիւրացոց յարեւելից՝ ի Թուրքիոյ, եւ Զուղայեցոց յարեւելից՝ ի Պարսից մետաքս բերելն» (3)

Զարմանալու ոչինչ կայ հոս քանի որ հում մետաքսի արտածումը, ինչպէս այսօր գորդե-

1) Հայ-Վենետ, 1896, Ս. Ղազար, էջ 430-431 :

2) Անդ՝ էջ 439 :

3) Անդ՝ էջ 441 : Այլուր ալ կը յիշուի Անկարայէն Լեհաստան մետաքս ներածուելը : Ըստ լեհական վաւերաթուղթի մը, 1648-ին, Միւրնի Հաճիովիչ Լեհաստանէն կը գրէ Անկարա գտնուող Ասլանգուլ Ղարալովիչէ. «Աշխատեցէք ձեռք բերել որքան կարելի է շատ մետաքս : Եթէ կարող էք վերցրէք պարտքով 15,000 թալերի» : («Հայրենիք» Ամսադիր, է. տարի, թիւ 10, էջ 94)